DOI: https://doi.org/10.59630/25792644-2024.1.26-33

ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԼԵԶՎԱՇԵՐՏԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸՋ. Գ. ԲԱՅՐՈՆԻ «ՉԱՅԼԴ ՀԱՐՈԼԴԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ» ՊՈԵՄՈՒՄ

ԳՈՒՐԳԵՆ ԳԵՒՈՐԳՅԱՆ

Բանալի բառեր – Լեզվաշերտ, գեղարվեստական դրսևորում, վաղնջական ժամանակներ, լեզվական ինքնություն, միֆոլոգեմ, ազգային գիտակցություն, հոգևոր կողմնորոշում, մատենագիր։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ջ. Գ. Բայրոնի ստեղծագործության լեզաշերտերին, լեզվառճական միջոցներին ու դրանց հայերեն թարգմանությանը անդրադառնալը պատահական չէ։ Այն պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առաջինն, իհարկե, Բայրոնի պոեզիային բնորոշ վեհ քննարականությունն է, լեզվական հզոր տարերքը և այն գոյացնող սուբյեկտիվ ու օբյեկտիվ պատճառների սերտ, օրգանական փոխկապակցվածությունը։Հենց այս կապն է, որ առկա է ամեն մի կենդանի խոսքում, մասնավորապես՝ գեղարվեստական տեքստում, իսկ վերջինս իր մեջ կրում է ստեղծագործողի կյանքի և անհատականության, ինչպես նաև ժամանակի և իրականության հոսքը։ Ասվածը մեծապես բնորոշ է բայրոնյան տեքստին, որտեղ բոլոր բառերը, լեզվառճական միջոցներն ու լեզվաարտահայտչական տարրերը մեկընդմիշտ դրոշմված են բանաստեղծի հոգու և ժամանակի իրականության կնիքով։ Այսպիսով, լեզվականի մեջ միահյուսվում են անհատականը և սոցիալականը՝ իմաստավորված ըստ գրողի անհատականության ու գաղափարագիտական հայեցակարգի։

Ջ. Բայրոնի պոեզիայում բազմաթիվ են նման անհատական-հայեցակերպային իմաստավորումները կամ երանգավորումները, որոնք հիմ-

նականում վերաբերում են պատմամշակութային անցյալին և կազմում եմ նրա պոեզիայի ուղղահայաց համատեքստը[1]:

Բայրոնյան լեզուն, որը հարուստ է թե՛ միֆոլոգեմային, թե՛ աստվածաշնչյան-արքետիպային լեզվաշերտերով և մի կողմից հանդես է գալիս որպես բանաստեղծի ինքնազգացման և ինքնագիտակցման, իսկ մյուս կողմից՝ արտաքին աշխարհի արտահայտություն կամ ազդանշան գրավում է ինչպես լեզվաբանների այնպես էլ թարգմանիչների ուշադրությունը: Կարևոր տեսական ու գիտագործնական նշանակություն ունեն բառերի, բառակապացությունների մեջ ամփոփված, երբեմն կարծես կոդավորված բարոյափիլիսոփայական ու գեղագիտական իմաստավորումները, և դրանց հիմքում ընկած միֆոլոգեմային կամ արքետիպային հասկացությունների նորանշանակ կիրառումները:

ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԼԵԶՎԱՇԵՐՏԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ Ջ. Գ. ԲԱՅՐՈՆԻ «ՉԱՅԼԴ ՀԱՐՈԼԴԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ» ՊՈԵՄՈՒՄ

Յուրաքանչյուր ազգային լեզվի բառապաշարում կարելի է մատնանշել շերտեր, որոնք լեզվի մեջ մուտք են գործել տարբեր ժամանակահատվածներում՝ վաղնջական ժամանակներից մինչև նոր և նորագույն ժամանակները: Նման շերտերը, որոնք կազմում են տվյալ լեզվի բաղադրիչ տարրերը և, միաժամանակ, առանձնահատկությունը, յուրաքանչյուր դարաշրժանում կախված քաղաքակրթական ընդհանուր մակարդակից և տվյալ դարաշրջանին հատուկ գաղափարագեղագիտական գերիշխող նկրտումներից, սկսում են հանդես գալ տարբեր՝ նորիմաստ դրսևորումներով: Ինչպես գրում է Վ. Ֆոն Հումբոլդտը՝ «Ժամանակների և ժողովուրդների առանձնահատկություններն այնքան սերտ են ներհյուսված լեզուներին, որ լեզուներին երբեմն անարդարացիորեն վերագրվում է այն, ինչն ամբողջովին կամ մեծ մասամբ վերաբերում է դարաշրջաններին և ժողովուրդներին..»: (Гумбольдт В. ФОН, 1985:372):[2] Ճիշտ է, լեզուն իր մեջ արտացոլում է ժամանակները, ժամանակային-պատմական փոփոխություն-

[1] **Гюббенет И. В.** К вопросу о "Глобальном" вертикальном контексте ||Вопросы языкознания N6, 1980.

[2] **Гумбольдт В. фон.** Язык и философия культуры. М. , "Прогресс" 1985.

ները, բայց այն հիմնականում իր էությամբ մնում է նույնը, և եթե նույնիսկ փոխվում է՝ ինչ-ինչ ներգործությունների արդյունքում, ապա «փոփոխվելու այդ ունակությունը կրկին պայմանավորված է [1]լեզվի բուն, իսկական բնույթով»: (նույն տեղում, էջ 373): Հումբոլդտը, քննարկելով լեզվական ինքնությանը և լեզու-հանրույթ-անհատ փոխառնչությանը վերաբերող մի շարք հարցեր, կատարում է հույժ կարևոր և առացնքային 2 դիտարկում՝

«1. Լեզուն, չնայած բոլոր կողմնակի ազդեցություններին, պահպանում է իր բնույթին հատուկ անհատականությունը: Այն արձագանքում է ներգործությանը և թույլատրում ազատ գործածություն՝ միայն այդ շրջանակներում:

2. Լեզվի հակադարձ ներգործությունը ավելի որոշակի է այնքանով, որքանով անցյալում ժողովուրդների ողջ ստեղծածը նրա միջոցով ներգործում է անհատի վրա…» (նույն տեղում, էջ 372):

Եթե լեզուն «ներգործում է անհատի վրա», ապա, բնականաբար, ներգործում է նաև տվյալ էթնիկ հանրույթի ընդհանուր ազգային մտածողության ու հոգեբանության վրա, այնպես որ, լեզուն ոչ միայն փոխանցող հաղորդակցային, այլև ներգործող-ձևավորիչ նշանակություն ունի: Ուստի, որքան որ անգլիացին կամ հայը իր պատմական փորձառությամբ ու ծագումնաբանական-էթնիկական-հոգեբանական յուրահատկությունների շնոհիվ ձևավորել է լեզուն, նույնքան էլ լեզուն իր առանձնահատկություններով (բառակերտական, շարահյուսական, լեզվառճական և այլն) ձևավորել է անգլիացուն կամ հային՝ իբրև ինքնություն (identity):

Լեզուն, որպես կազմավորիչ-ձևավորիչ նշանակություն ունեցող իրակություն , առկայացել է տվյալ էթնոսի առաջացման ամենանախնական փուլերում և այդ առումով ընկղմված է առասպելաբանական ժամանակների մեջ, երբ ստեղծվում էին առասպելները (միֆերը)՝ որպես պատմություններ աստվածների մասին:

Պետք է նշել, որ թե՛ անգլիական, թե՛ հայկական էթնիկ-ազգային գիտակցությունը մշտապես կրել և կրում է «եվրոպակենտրոն» բնույթ, որի առանցքը կամ կենտրոնը եղել է Հին Հունաստանը, հին հունական բազմաստվածային կրոնը, անտիկ փիլիսոփայությունը, գիտությունն ու

գրականությունը: Իսկ թե ինչո՞ւ է բրիտանական (= անգլիացիներ, շոտ-լանդացիներ, իռլանդացիներ, ուելսցիներ) կամ հայկական ազգային գի-տակցությունն ու հոգևոր կողմնորոշումը ուղղված եղել դեպի հունաս-տան նույնն է թե Եվրոպա բացատրելի է մի շարք հանգամանքներով՝ ծա-գումնաբանական (ըստ Սուրբ Գրքի՝ ընդհանուր հաբեթյան ծագմամբ), նույն՝ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելու և հնդիրանական արեալի նույն աստվածություններն ունենալու և այլ իրողություններով: Անհրաժեշտ է նշել, որ V դարի պատմիչ Մովսես Խորենացին, շեշտելով իր հունամետ կողմնորոշումը, գրում է «Եվ այս բանի վրա թող ոչ ոք չզար-մանա, որ թեպետ շատ ազգեր մատենագիրներ են ունեցել, ինչպես ամեն-քին հայտնի է, մանավանդ պարսիկներն ու քաղդեացիները, որոնց մոտ ավելի շատ են գտնվում մեր ազգին վերաբերող բազմաթիվ գործերի հի-շատակարաններ, մենք սակայն միայն Հունաց պատմագիրները հիշե-ցինք և այնտեղից խոստացանք առաջ բերել մեր ազգաբանության շարքը»: (Մովսես Խորենացի, 1977:6):[1] Նա, Հունաստան անվանելով «գիտության մայր կամ դայակ» (նույն տեղում, էջ 7), քննադատելով պարսից «շինծու, անմիտ և անհանճար զրույցները», գրում է. «Մի՞թե սրանք հույների պերճ ու ողորկ, պատճառավոր առասպելներն են, որոնց տակ թաքնված են ճշմարիտ իրողություններ: (նույն տեղում, էջ 56):Այստեղ ուշագրավն այն է, որ խոելով հույների «պերճ ու ողորկ» առասպելների մասին, Խորենա-ցին առասպելները մեկնաբանում է որպես այլաբանություններ, որոնց տակ թաքնված են ճշմարիտ իրողություններ:Դա նման է էպիկուրյաններ-ի մեկնաբանությանը, որոնք միֆերը համարում էին բնական-փաստա-կան իրողությունների հիման վրա ստեղծված այլաբանություններ՝ ի հա-կադրություն Պլատոնի, ըստ որի միֆը ոչ թե այլաբանական առակ է, որը կարելի է մեկնաբանել, այլ իդեալական որևէ իրողության փիլիսոփայա-կան-խորհրդանշանային դրսևորումը:

Որոշ հետազոտողներ գտնում են, որ առասպելը բաղկացած է կա-ռուցվածքային այնպիսի միավորներից, ինչպիսիք են արքետիպերը, մի-ֆոլոգեմները և միֆեմները(առասպելական փոխհարաբերություններ, սյուժեներ, որոնք ձևավորվում են միֆոլոգեմների հիման վրա): (Տես

[1] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, Եր. «Հայաստան» 1990:

Леви-Строс К., 1985:187-188):[1] Յուրաքանչյուր լեզու և այդ լեզվով ստեղծագործող յուրաքանչյուր գրող առնչվում է առասպելական-արքետիպային լեզվամտածողության որոշակի շերտերի ու բառապաշարային որոշակի «նստվածքների» հետ: Ընդ որում՝ որքան խորն է տվյալ ստեղծագործողի, այսպես ասած, ազգային-առասպելաբանական (էթնոմիֆոլոգիական), ինչպես նաև արքետիպային շերտերի զգացողությունը կամ դրանց ինտուիտիվ-անգիտակցական վերհիշումը, այնքան, ուրեմն, նա մերձ է ու հարազատ տվյալ էթնոմշակութային հանրությանն ու նրա լեզվամտածողությանը, դրանով իսկ՝ ողջ մարդկությանը: Այսպիսի գրողներ են Գ. Նարեկացին, Հովհ. Թումանյանը, Վ. Տերյանը, Ե. Չարենցը, Վ. Շեքսպիրը, Ջ. Բայրոնը, Դանթեն (Դանտե), Մ. Սերվանտեսը, Ֆ. Ռաբլեն և մյուս մեծերը: Նրանց ստեղծագործություններում ակնհայտ են արքետիպային հնագույն շերտերի «վերհիշումները» և դրանց «թարմացումներն» ու փոխակերպումները՝ պատմական, ժամանակային, աշխարհաքաղաքական ու մշակութային նոր պայմաններում, գաղափարագեղագիտական այլ հարթության վրա:

Ինչ վերաբերում է Ջ. Գ. Բայրոնին, ապա պետք է նկատել, որ նրա ստեղծագործություններում ևս առկա են նշյալ «վերհիշումները»՝ գլխավորապես միֆոլոգեմների տեսքով: Դրանք հիմնականում վերաբերում են հունա-հռոմեական առասպելներին (նաև պատմական անցքերին ու իրադարձություններին): Մի ստվար խումբ են կազմում նաև աստվածաշնչյան-քրիստոնեական (արքետիպային-սակրալ) հակացությունները: Բանն այն է, որ վերջիններս Բայրոնի կողմից կիրառվել են ոչ թե որպես ռեալ իրողության արտահայտիչներ (թեև կան նաև այդպիսի կիրառություններ), այլ որպես միֆոլոգեմներ: Նշյալ երկու՝ հունա-հռոմեական և աստվածաշնչյան լեզվաշերտերի առկայությունը բնորոշ է ոչ միայն Բայրոնին, այլև իր մեծ նախորդներին՝ Վ. Շեքսպիրին, Իտալիայում՝ Դանթեին և, այլն: Հունա-հռոմեական առապելները Բայրոնին գրավել են իրենց պայծառագեղությամբ, նրբին մշակվածությամբ և հուզականությամբ, ինչպես նաև՝ բազմանշանակ սիմվոլիկայով, իսկ Աստվածաշունչը եղել է նրա ամենանվիրական խոկումների մշտական առանցքը[2]:

---

[1] Леви-Строс К., Структурная антропология. М., "Наука", 1985

[2] Ծանոթագրություն [1].

Բայրոնի պոեզիայում միֆոլոգեմների առկայությունը (և առատությունը) կարելի է բացատրել երկու կարևոր հանգամանքով. առաջինը՝ բանաստեղծի նախասիրությամբ, քանի որ նրա աշխարհազգացողության և լեզվամտածողության ողջ համակարգը ներթափանցված է հունա-հռոմեական առասպելներից ավանդված միֆոլոգեմներով: Պոեզիայում՝ ընդհանրապես, իսկ Բայրոնի պոեզիայում՝ մասնավորապես, միֆոլոգեմների առկայության մյուս պատճառը, թերևս, առասպելի (միֆի) «անժամանականությունն» է, ներկան (այսօրը) առասպելական անցյալի նորագյուտ բացահայտումներից մեկն է, իսկ առասպելական անցյալը ոչ թե սոսկ անցած-գնացած կամ անցողիկ մի բան է, այլ՝ համաժամանակյա և մշտական գործընթաց, որն իր բանաստեղծական դրսևորումն է ստացել տարբեր բանաստեղծների, այդ թվում նաև Բայրոնի ստեղծագործություններում. ուստի հետագա բանաստեղծական դրսևորումները ևս, այդ նույն համաժամանակյա առասպելի բացահայտումներն են՝ ժամանակի մեջ: (Տես Гуревич А. Я., 1972:87-88)[1]:

Հունա-հռոմեական առասպելներից ավանդված միֆոլոգեմները, որոնք լեզվական մակարդակում կարող են համարվել կայուն կամ ազատ բառակապակցություններ, կազմում են բանաստեղծի բառապաշարի մի զգալի մասը: Պետք է ասել, որ կայուն բառակապացությունները հաճախ ունեն միֆոլոգեմային իմաստ, ինչպես, օրինակ, «չքնաղ մուսա», «դուստր ոսկեհեր» կապակցությունները՝ «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի առաջին նվագի 1-ին ինչյակում.

Oh! Thou! In Hellas deemed of heavenly birth,
Musel formed or fabled at the Minstrel’s will!.
(Byron G. G., Childe Harold’s Pilgrimage, Moscow, 1956, p.47)[2]

Թարգմանաբար՝

Ո՜վ չքնա՜ղ մուսա, երկնային ծնունդ,
Հույն երգիչների դո՜ւստր ոսկեհեր…
(Բայրոն, երկերի ժողովածու, Ե., 1965, էջ 101)[3]

---

[1] **Гуревич А. Я,** категория средневековой культуры М., 1972:
[2] **Byron G. G.** Childe Harold’s Pilgrimage, Moscow, 1956:
[3] **Բայրոն,** Երկերի ժողովածու, Ե., 1965:

Ընդգծյալները կայուն բառակապացություններ են. դրանք են՝ միֆոլոգեմը (մուսա)՝ իր մակդիրի (չքնաղ) հետ, և մեկ միասնական կայուն բառակապակցություն կազմող «դուստր ոսկեհեր» միֆոլոգեմը, որը փաստորեն «մուսա»-ի մեկ այլ անվանումն է (փոխանունություն)։ Առաջին դեպքում միֆոլոգեմը (մուսա) կարող է հանդես գալ նաև միայնակ, իսկ երկրորդում՝ ոչ, քանի որ «դուստր»-ը միայն «ոսկեհեր» մակդիրով է, որ հիշեցնում է Զևսի և Մնեմոսինեի՝ հիշողության աստվածուհու, դուսրերին՝ Ապոլոնի ուղեկից ինը մուսաներին կամ նրանցից որևէ մեկին՝ Կալիոպեին, Էվտերպեին կամ Էրատոնին… [1] (Դիցաբանական բառարան, 1985:162)։ Եթե առաջինը («չքնաղ մուսա») կարող է հասկացվել նաև համատեքստից դուրս և այն էլ ուղղակի՝ «մուսա» իմաստով, ապա երկրորդը հասկացվում է միայն ամբողջական բանատողի («Հույն երգիչների դուստր՝ ոսկեհեր») համատեքստում։ Այսպիսով կարելի է ասել, որ առաջինը կայուն կապակցություն է, և, որպես այդպիսին, փոխանցվել է ժամանակի ընթացքում, կիրառվել պոեզիայում և արձակում, ինչպես նաև ունեցել իր գեղանկարչական ու քանդակային մարմնավորումները։ Երկրորդ կապակցությունը՝ «ոսկեհեր» մակդիրով և «հույն երգիչների» հատկացուցիչով, ինչպես ասվեց, <u>փոխանունություն է</u> (թեև կարող է այլ դիտանկյունից, համարվել նաև <u>շրջասություն</u> (պերիֆրազ))։ Ամեն դեպքում, այն այլաբերության (տրոպ) տեսակ է և մեր կարծիքով՝ <u>փոխանունություն (մետոնիմիա)</u>՝ կազված շրջասությամբ։ Ինչպես հայտնի է, շրջասությունը ոչ թե առանձին ոճական միավոր է, այլ փոխանունություն կազմելու միջոց, (երբ պարունակյալի փոխարեն տրվում է պարունակողը՝ «քաղաքն արթնացավ», երբ հոգեկան ապրումի փոխարեն տրվում է երևույթը կամ նշանը՝ վշտանալու փոխարեն «արցունք թափել» և այլն)։ Այլ կերպ ասած, շրջասությունը ևս փոխանունություն կազմելու միջոցներից է, երբ բուն առարկան, անձը կամ երևույթը նշելու փոխարեն տրվում են նրա հատկանիշները։ Գտնում ենք, որ նման միջոցներից մեկն էլ <u>սինեկդոխն</u> է (համըմբռնում), երբ ամբողջի փոխարեն տրվում է նրա սիմվոլը՝ հատկանշական մի մասը։ Ուստի, սինեկդոխը ևս, ինչպես շրջասությունը, առանձին ոճական միավոր չէ, այլ <u>փոխանունություն</u> կազմելու այլ միջոց։

[1] Դիցաբանական բառարան, Ե. «Լույս», 1985

Կայուն կամ ազատ կապակցությունները (տես Խաչատրյան Լ. Մ., 1996) [1] երկու տեսակի են կապակցություններ, որոնք կայուն են և չունեն այլաբանական իմատ (կամ գիտակցվում են որպես այդպիսիք), և կապակցություններ, որոնք ունեն այլաբանական իմաստ և հետևաբար, կարող են լինել փոխանունություններ կամ փոխաբերություններ, որոնք էլ, իրենց հերթին, հաճախ հանդես են գալիս որպես դարձվածային միավորներ կազմող միջոցներ: Ինչպես նշում է Ե. Գևորգյանը՝ «Լեզուներում դարձվածքները ձևավորվում են այլևայլ ոճական հնարների միջոցով: Հայերենում այդպիսի ոճական հնարներ են փոխաբերությունը, չափազանցումը, շրջասությունը, փոխանունությունը և համեմատությունը» (Գևորգյան Ե. Հ., 1969:47):[2] Ասվածին պետք է հավելել, որ անգլերենում ևս դարձվածքները կազմվում են նման ոճական հնարների միջոցով: Ինչ վերաբերում է չափազանցումին (հիպերբոլ) և փոքրացմանը կամ նվազույթին (լիտոտա), ապա դրանք ևս փոխաբերություն, փոխանունություն և համեմատություն կազմելու (ստեղծելու) միջոցներ են կամ եղանակներ:

Ստորև տրվում են հունա-հռոմեական առասպելներից ավանդված որոշ միֆոլոգեմներ (լեզվական՝ ձևաբանա-շարահյուսական մակարդակում՝ կայուն բառեր ու բառակապացություններ), որոնք կիրառել է Ջ. Բայրոնն իր պոեզիայում: Օրինակները բերվում են «Չայլդ Հարոլդի ուխտաննացությունը»[3]:

Now Paphian girls were known to sing and smile…;

(I - VII, p. 49)

Պաթոսի դուստրերն երգում են, խնդում…

(I - 7, էջ 103)

Peace to the perished! May the warrior's meed

And tears of triumph their reward prolong!

(I - XLII, p. 64)

Թող կանաչ դափնին, խոցված սրտերն հեգ

Դառնան մեծ պարգև զինվորին ընկած …

---

[1] **Խաչատրյան Լ. Մ.,** Խոսքիմաստային տարարժեքությունը արդի հայերենի կայուն կապակցություններում: Ե., ՀՀ, ԳԱԱ «Գիտություն» 1996:

[2] **Գևորգյան Ե. Հ.,** Հայերենի դարձվածքները Ե., ԵՊՀ, 1969:

[3] Ծանոթագրություն [2].

(I - 43, էջ 118)

Stalks with Minerva's step where Mars might quake to tread.

(I - LIV, p. 68)

Միներ՝վայի հետ քայլում է անահ,

Ա՜խ, այդ վայրերով Մարսն էլ չէր գնա …

(I - 54, էջ 121)

Hath Phoebus wooed in vain to spoil her cheek…

(I - LVIII, p. 69)

Ֆեբոսը ուզեց նրա այտերը այրել …

(I - 58, էջ 123)

Ընդգծյալները անուններ ու սրբազան միֆոլոգեմներ են՝ կայուն հասկացություններ կամ բառակապակցություններ, որոնք կազմում են անգլերենի, ինչպես նաև հայերենի բառապաշարի հիմնական շերտերից մեկը, և որպես այդպիսիք, կարող են դառնալ հատուկ հետազոտության առարկա։ Բերենք այլ օրինակներ.

Oh, thou Parnassus! Whom I now survey…

(I - LX, p. 70)

Վերջապես, Պառնաս, շողում ես իմ դեմ…

(I - 60, էջ 123)

Որպես հատուկ խորհրդաբանություն ունեցող անուն՝ Պառնասը բայրոնյան պոեզիայում հաճախ է կիրառվում, այն հաճախադեպ է նաև հայ բանաստեղծական բառապաշարում (օրինակ, Հովի. Թումանյանի կամ Ե. Չարենցի գործերում)։

Though here no more Apollo haunts his Grot…

(I - LXII, p. 70)

… իր պերճ դղյակին

Ապոլոնն էլ չի այցելում կրկին …

(I - 62, էջ 124)

«Ապոլոնն» որպես միֆոլոգեմ Բայրոնի պոետական բառապաշարում հանդես է գալիս ոչ միայն առանձին, այլ նաև իրեն բնորոշ հատկանիշներով՝ «ոսկեգանգուր», «նետաձիգ», «դափնեկիր», ձեռքին՝ ոսկելար կիթառ. որպես «լույսի աստված», պոեզիայի ու երաժշտության հովանա-

վոր, նաև իբրև «կանխատես», որի անունով գուշակություններ էին անում դելփյան (Դելփիքի) պատգամախոսները։

…Nor e'er did Delphi, when her Priestess sung
The Pythian hymn with more than mortal fire, …
(I - LXIV, p. 71)

…Մի՞թե Դելֆիի կույսերն հրավառ,
Որ Պյության հիմն են երգել տենդահար…
(I - 64, էջ 125)

Son of the Morning, rise!
(II - III, p. 88)

Արթնացի՛ր, ո՛ւստր դու արշալույսի …
(II - 3, էջ 137)

Վերջին օրինակում, ընդգծյալը շրջասությամբ կառուցված փոխանունություն է և վերաբերում է թուրքին (որպես Արևելքի զավակի), սակայն նման շրջասությունը («արշալույսի ուստր») որպես արքետիպ ունի հին հունական առասպելները (օրինակ, Հելիոսի և Կլիմենեի որդու՝ Փաետոնի կամ «Վարդամատն» Արշալույս-Էոս դիցուհու մասին)։ Հայերեն թարգմանությամբ առավելապես շեշտվում է օդում առկախ (սակայն ենթագիտակցության մեջ առկա) արքետիպի ներկայությունը, թեև, ինչպես ասվեց, բանաստեղծը նկատի ունի թուրքին։ Առանձին վերցրած «արշալույսի ուստրը» միֆոլոգեմ է՝ ավանդաբար փոխանցված կայուն բառակապակցություն։

And thou may'st find a new Calypso there.
(II - XXX, p. 97)

Զգույշ, չգտնես նուրբ ու գեղանի
Մի նոր Կալիպսե…
(II - 30, էջ 147)

Այստեղ միֆոլոգեմը (Կալիպսե կամ Կալիպսո), ինչպես և այլ դեպքերում, հատուկ անուն է՝ սերված հին հունական առասպելից, ավելի ստույգ Հոմերոսի «Ոդիսականի» այն դրվագը, որը վերաբերում է Ոդիսևի ծովային ճանապարհորդությանը, երբ վրեժխնդիր Պոսեյդոնի հարուցած դժվարությունների պատճառով Ոդիսևսը ընկնում է Օգիգիա կղզին, Կալիպսե հավերժահարսի (կախարդուհու) մոտ և յոթ տարի մնում այնտեղ՝ հայրենի Իթակե հասնելուց առաջ։ Հայերենում այս անունը փոխանցվել և

տարածում է գտել «Կալիպսե», անգլերենում՝ «Calypso» ձևով։ Այն անգլերեն ու հայերեն անունների շարքում ունի իր հատուկ տեղը, քանի որ, բացի սովորական անուն լինելուց՝ կիրառվել (և կիրառվում է) իր վաղեմի առասպելական «լիցքավորմամբ», որպես «դյութիչ կախարդուհի»։

Thine olive ripe as when Minerva smiled …

(II - LXXXVII, p. 118)

… Թեև չի ժպտում Միներ՝վան դարձյալ …

(II - 87, էջ 167)

Միներ՝վա միֆոլոգեմը այստեղ կիրառվել է առանց իր հիմնական օժտումների՝ ատրիբուտների («իմաստուն», «գիշերային» և այլն)։ Ուշագրավ է, որ այն և՛ առանձին, և՛ իր ատրիբուտներով հանդերձ, լայնորեն կիրառվել է եվրոպական, ռուսական (Ս. Պուշկին) և՛ հայկական (Ե. Չարենց) պոեզիայում։ Անշուշտ, խոսքը վերաբերում է ոչ միայն *Միներ՝վային*, այլ, ընդհանրապես, անտիկ առասպելների առանցքային մյուս միավորների՝ միֆոլոգեմների, բանաստեղծական կիրառությանը, որով լուծվում է երկու հարց. նախ, գաղափարագեղագիտական ընդհանուր դաշտը «թարմանում» է միֆոլոգեմի նոր կիրառմամբ, ապա և հարստանում է տվյալ ազգային լեզվի բառապաշարը։ Ասվածի վառ վկայությունը միֆոլոգեմների չարենցյան կիրառություններն են «Դիստիքոսներ» շարքից.

Ո՛չ ակունքները Դելփյան, ոչ կախարդանքը Պանի
Չեն հոչակի քեզ պոետ, եթե խորթ է հոգուդ – առօրյան։

***

Ֆավն, ու նիմֆեր, ու սրինգ – երգ և տավիղ քաղցրաձայն…
Մի՞թե աղբյուրդ չուներ – տիղմ ու թախիծ, Ապոլո՛ն։

(Չարենց Ե., 1984։ 573, 576)[1]

Չարենցի կիրառած միֆոլոգեմների (Նավզիկի, Թերսիդես, Ուլիս, Աքիլլես, Հելիկոն և այլն) ու դրանց տրված բնորոշումները հարստացրել են հայոց լեզվի բառապաշարն և ընդլայնել հայերենի լեզվամտածողության ու լեզվաոճական հնարավորությունների շրջանակները։ Միֆոլոգեմները և դրանց հատուկ կամ պատշաճեցված բնորոշումները (օրինակ, Ֆավնին բնորոշ «երգեցիկ ձայնը»՝ Ե. Չարենցի «Ես վախենում եմ, ինչպես

[1] **Չարենց Ե.** Պոեմներ, բանաստեղծություններ։ Եր., Երևանի համալսարանի հրատ. 1984

նեկրոման…» բանաստեղծության մեջ, որտեղ ասվում է՝ «… ու Ֆավնի ձայնով երգեցիկ…», նույն տեղում, էջ 450) լեզվի բառապաշարում արմատավորվում և այնուհետև նորանոր պատշաճեցումներով ու իմաստային երանգավորմամբ շրջանառվում են ոչ միայն ինքնուրույն (ազգային) գրականության զարգացման ընթացքում, այլև՝ թարգմանությունների միջոցով: Ամեն դեպքում, թարգմանվող միֆոլոգեմները և միֆոլոգեմային բնորոշիչները «ազգայնացվում են», մեր պարագայում՝ «հայերենացվում», ենթարկվելով տվյալ լեզվի ավանդույթներին և ձևաբանա-շարահյուսական ու լեզվաոճական առանձնահատկություններին:

Արդիական կիրառումներով այսօրինակ միֆոլոգեմ-բառակապակցությունները, ժամանակի ընթացքում սկսում են գիտակցվել իբրև հարաբերականորեն կայուն կապակցություններ՝ այլաբանական իմաստավորմամբ, որն էլ թույլ է տալիս եզրակացնելու, թե դրանք հանդես են գալիս կամ միտված են հանդես գալ որպես դարձվածքներ: Բերենք միֆոլոգեմ-դարձվածքների մի քանի օրինակ.

1) Whilome in Albion's isle there dwelt a youth;
Who ne in Virtue's ways did take delight;…
(I - II, p. 47)
Ալբիոն կղզում կար մի երիտասարդ,
Չընտրեց նա ուղին առաքինության…
(1 - 2, էջ 101)

Այստեղ դարձվածքային միջուկը «առաքինության ուղին» է, որտեղ բուն միֆոլոգեմն է ուղին (ճանապարհը). արքետիպ, որը տարածված է ինչպես հունա-հռոմեական, այնպես էլ այլ ժողովուրդների առասպելներում ու բանահյուսական ստեղծագործություններում, ինչպես նաև Աստվածաշնչում: Հիշենք թեկուզ հին հունական առասպելը Արիադնայի ուղեցույց թելի վերաբերյալ: Անշուշտ, այս և նման դարձվածքներում «ուղին» հանդես է գալիս փոխաբերական իմաստով, ինչպես օրինակ՝ «ուղին կորցնել», «ուղի ցույց տալ», «ուղի ընկնել» (կամ «ճամփա ընկնել») և այլն:

2) And Vice, that digs her own voluptuous tomb, …
(I - LXXXIII, p. 77)
Ու մեղքն հեշտասեր փորեց գերեզման …
(1 - 83, էջ 131)

Այս օրինակում բուն միֆոլոգեմային կապակցությունն է «փորեց գերեզման», որն, անշուշտ, դարձվածային միավոր է և հիմնականում համարժեք է բնագրին: Այստեղ, բնականաբար, կարելի է խոսել երկու լեզուներում առկա տիպաբանորեն նույնական դարձվածքի մասին, այսինքն՝ նրանք սերում են նույն ընդհանուր արքետիպից:

3) Of our own Soul turn all our blood to tears, …

(III - LXX p. 176)

… և քո խեղճ հոգին

Արյամբ կարտասվի …

(3 - 70, էջ 196)

Պետք է ասել, որ սա այն հազվադեպ օրինակներից է, երբ ունենք բնագրի և թարգմանության լիակատար համապատասխանություն, մասնավորապես՝ միֆոլոգեմի նույնատիպ կիրառության առումով: Ուշագրավ է, որ հայերենում շրջանառվում է «արյուն-արտասուք» դարձվածային միավորը, որը, ինչպես և անգլերենում, նշանակում է «դառնակսկիծ լաց»: Ինչ վերաբերում է «հոգի» բառին, ապա այն, ինչպես և «արյունը», միֆոլոգեմներ են, որոնք բազմիցս կիրառվում են հունա-հռոմեական առասպելներում: Այս դեպքում, սակայն, դրանք հանդես են գալիս որպես դարձվածային միավորներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Միֆոլոգեմների հետազոտությունը ցույց է տալիս մի ուշագրավ իրողություն. այն, որ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուներում նույն միֆոլոգեմներն են հանդես գալիս և հիմնականում՝ նույն իմաստային բեռնավորմամբ: Դա վերաբերում է նաև անգլերենին ու հայերենին:

«Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմից բերված օրինակներում զուգադրելով բնագիրը և հայերեն թարգմանությունը, երբեմն զգալի «շեղումներ» էին արձանագրում բնագրից՝ կապված իննյակի կառուցվածքային-տաղաչափական առանձնահատկություններից և բանաստեղծի ազատ լեզվամտածողությունից: Նախ Բայրոնը նշյալ միֆոլոգեմային կապակցությունները համապատասխանեցրել է իննյակի կառուցվածքին

ու տաղաչափությանը՝ բնականաբար մեկնաբանելով այն յուրովի և իր անհատական մոտեցմամբ, դրանով իսկ որոշակիորեն «շեղվելով» ընդունված ավանդական կայուն կապակցություններից և «բեռնավորելով» դրանք պոեմի ոգուն, ոճին և լեզվատարերքին հատուկ հուզա-իմաստային նոր, թարմ նշանակությամբ ու զուգորդումներով: Ապա, պայմանավորված պոեմի տաղաչափական առանձնահակություններով և ուրույն լեզվամտածողությամբ, իննյակի ձևը հայերենում պահպանելու նպատակով, թարգմանիչը (Հ. Սևան), իր հերթին, հաճախ դիմել է նոր շեղումների՝ բնագրի միֆոլոգեմային բառակապացությունները արտահայտելով կամ ինքնուրույն կամ ավանդական տարբերակների կիրառումով, ուստի և այդ միֆոլոգեմային կապակցությունները երբեմն ընթերցողին են հասնում զգալիորեն փոփոխված տեսքով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այն փաստը, որ Բայրոնը 1817թ. հայերենից անգլերեն է թարգմանել Ս. Պողոս առաքյալի ուղերձները՝ ուղղված կորնթացիներին, արդեն խոսում է նրա հետաքրքրությունների մասին: Իսկ իր հրատարակչին՝ (John Murray) 1821թ. Ռավեննայից գրած նամակն, առավել ցայտուն է արտահայտում Բայրոնի քրիստոնեական ոգևորումները. «Ի՞նչն է պատճառը, որ մի կողմ եք դրել Ս. Պողոսի առաքելական թղթերը, որ թարգմանել էի հայերենից… Գուցե վախենում եք հրատարակել որևէ գործ, որ ներհակ լինի մանիքեության հարցում այդ եռամսյա հանդեսի կեղծավոր կարծիքին: Խնդրում եմ անմիջապես ուղարկել ինձ այդ առաքելական թղթերի արտատիպը: Ես ավելի լավ քրիստոնյա եմ, քան թե Ձեր այդ քարոզիչները, թեև վարձահատույց չեմ եղել այդպիսին լինելուս համար»: (Բայրոն. էջեր նամակներից, Ե., 1986, թրգմ.՝ Ա. Բեքարյանի, էջ 29-30): Բայրոնի աստվածաշնչյան ոգորումների մասին են վկայում նաև նրա «Հրեական մեղեդիներ» բանաստեղծական շարքը, «Կայեն» միստերիան և հատկանշական շատ հատվածներ այլ գործերից:

2.«Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» ռոմանտիկ պոեմը (“Childe Harold’s Pilgrimage” – A Romaunt), Ջ. Բայրոնը գրել է 1810-1812թթ. (I-II նվագ) և 1816-1817թթ. (III-IV նվագ): Չորս նվագից (canto) բաղկացած

այս պոեմը գրված է այսպես կոչված «սպենսերյան տներով» (“stanza of Spenser”), որն առաջինը կիրառել է XVI դարի անգլիացի մեծ բանաստեղծ Էդմունդ Սպենսերը (Edmund Spencer, 1552-1599) իր նշանավոր “The Faerie Queene” պոեմում: Սա տաղաչափական բարդ համակարգ է՝ գրված ինը տողանի և տասը վանկանի յամբական տներով՝ ababbcbcc հանգավորմամբ: Բանաստեղծական այս ձևն աչքի է ընկնում ճկունությամբ և հնչերանգային բազմազանությամբ, որը պոետին իր խոհերը, զգացմունքներն ու հույզերը համակողմանիորեն դրսևորելու մեծ հնարավորություններ է ընձեռում: Այս արժանիքները հրապուրել են նաև Բայրոնին, որը (կատարելապես տիրապետելով այս տեխիկային), հրաշալիորեն միավորել է պոեմի էպիկական շունչը (այսքանությունը) և վեհ քնարականությունը:

Гурген Геворгян, Литературное проявление греко-римских языковых пластов в поэме «Паломничество Чайльд-Гарольда» Джорджа Гордона Байрона и их перевод на армянский язык - В словарном запасе каждого языка можно указать пласты, которые проникли в язык в разные эпохи. Они могут быть долгосрочными или кратковременными в зависимости от их стабильности. Исходя из политического, культурного и образовательного уровня общества того времени, такие языковые единицы, приобретают новые оттенки значений, порой новые интонации. Что касается Байрона, необходимо отметить, что в его произведениях, особенно в поэме «Паломничество Чайльд-Гарольда» мифологемы имеют широкое применение. Они относятся в основном к греко-римским событиям. Есть также многочисленные мифологемы библейско-христианского характера. Эти мифологемы выражают реальный характер жизни того времени и оказывают значительное воздействия на язык, культуру и социальную жизнь. Наличие и обильность мифологемов в поэзии Байрона объясняется тем обстоятельством, что мифы не принадлежат какому-то определённому времени, они охватывают весьма широкий промежуток времени и естественно находят своё проявление в произведениях разных авторов, разных времён и стран. Разумеется, что Байрон не мог быть исключением. С уверенностью можно сказать, что мифологемы из грека-римского происхождения являются

устойчивыми или свободными словосочетаниями, которые приобретают новые значения в поэзии Байрона, чаще всего в качестве метафоров, метонимий, эпитетов, оксиморонов и т. д., которые в свою очередь способствуют образованию фразеологических единиц. Как отмечают некоторые лингвисты, фразеологические единицы образуются различными вышеуказанными стилистическими средствами.

Gurgen Gevorgyan, Literary manifestation of Greco-Roman linguistic layers in the poem "Childe Harold's Pilgrimage" by G. G. Byron and their translation into Armenian - In the vocabulary of every language there are layers, which penetrated into the language during different epochs. They can be long-lived or short-lived depending on their stability. Based on the political, cultural, and educational level of the period, such linguistic units acquire new shades of meaning, sometimes new intonations. As far as Byron is concerned, it should be noted, that in his works, especially in the poem "Childe Harold's Pilgrimage" mythologems are used widely. Basically, they refer to the Greco-Roman events. There are also mythologems of Biblical-Christian character. These mythologems express the real character of life of that time and exert a considerable influence on the language, culture, and the social life. The availability and abundance of mythologems in the poetry of Byron is explained by the fact, that myths don't belong to a definite period of time, they embrace quite a wide period of time and, naturally, they find their manifestation in the works of various authors, various times and countries. Of course, Byron couldn't be an exception. One can surely state, that the mythologems from Greco-Roman origin are stable or free word combinations, which acquire new meanings in Byron's poetry, very often as metaphors, metonymies, epithets, oxymorons, and so on, which in their turn contribute to the formation of phraseological units.

Ուղարկվել է խմբագրություն 07.06.2024թ.
Գրախոսվել է 09.06.2024թ.
Ստորագրվել է տպագրության 10.06.2024թ.